նիս բանից երկուց Կէաճօրայ, ընդդէմ է հրամանի նորին զմի կողմն պաշտպանել եւ զմի կողմն առաթուր կոխել. այլ ըստ հրովարտակին՝ արդարութեամբ կատարել զգործն. երկիր 'ի քէն, գուցէ արտասահմանեսցիս 'ի մեռաղս, և Ցոյնք ոչ կարեն փրկել զքեզ: Բարկացեալ Դատաւորին ընդ խիստ բանս նորա, հարցանէր սրտմտութեամբ ցՀայս. զի՞նչ ունիք տալ այլ եւս 'ի կատարել. և նոքա ցուցին զմի պատկեր Պատանատեղւոյն յափշտակեալ 'ի Ցունաց, զչորեսին կանթեղս 'ի շրջապատս Գերեզմանին և յայլ տեղիս, և ըզպատկերսն. լի եղեւ սրտմտութեամբ և գոյն երեսաց իւրոց շրջեցան, և խոժոռեալ գոչէր 'ի վերայ Հայոց, և նովին բարկութեամբ ել և գնաց 'ի տաճարէ անտի. մեկնեցան և այլքն զկնի նորա, և փակեցաւ դուռն:

Զօքան Հայք առանձին առ Դատաւորն և աղաչէին զնա կատարել զգործն, զնոյն առնէին և գործակալք Տէրութեանն, այլ բնաւ չառնոյր յանձն, յուսացեալ 'ի մեծամեծ խոստմունս Ցունաց, ոչ կաշառօք, այլ օրինօք ասէր՝ կատարել զգործն, թէպէտեւ Հայք յառաջ բերէին զվճարումն գործոյն դատաստանաւ առաջի գիտնականաց օրինօք և հրամանաւ Արքայի, այլ նա յամառեալ 'ի բանս իւր ասէր, գիտեմ զօրինականս Կոստանդինուպօլսոյ, զի տգէտ են. անտի և ընդունայն գրեալ են մի Իլամ, և Արքայն սակս պարգելոյ զձեզ տուեալ է (Խաթթի Շէրիֆ), սակայն ես այր ընթերցող եմ և հմուտ՝ դատաստան պալատականաց, աներկիւղ յամենայնի, և վասն սոցին իրաց տաց պատասխանի առաջի Արքայի, և այլ սոյնպիսի բանք: Ոստիկան Կուսակալին յանկարծ ձայն եհան 'ի քաղաքին, որպէս թէ Բդեշխն խնդրեալ է զինքն 'ի Դամասկոսէ, գնալ եւ անդրէն դառնալ, և Հայք թախանձանօք խնդրեալ էին 'ի նմանէ լինիլ միջնորդ առ Կուսակալն և առ Քեահեայ նորին, սակս խնդրոյ Բեթղեհէմի և գերեզմանին Սուրբ Աստուածածնի. գրեցին նաեւ գիր աղաչանաց առ Քեահեայ Պէյն և առ գանձապետ նորին Կիւչիւք Ցարութիւն Հայազգի, որ 'ի սոյն ամի եկեալ էր յԵրուսաղէմ յուխտ, և վերահասու լեալ գործոյն, և խոստացեալ էր ըստ կարելւոյթեան լինել ձեռնտու, և մեկնեցաւ Ոստիկանն իւրովքն հանդերձ յԵրուսաղէմէ ('ի 6 Ցունիսի):